

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ

**Միջանկյալ Ֆինանսական հաշվետվություններ
2017թ չորրորդ եռամսյակի համար**

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն	7
Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8
Հիմնական միջոցներ	20
Կապակցված կողմեր	20

*«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն
2017թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ*

	31 դեկտեմբեր 2017թ	31 դեկտեմբեր 2016թ
Հազար դրամ		
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	5,180,696	4,564,085
Ոչ նյութական ակտիվներ	3,709	4,943
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	26,284,846	26,284,846
Ատոցացված կազմակերպությունում ներդրումներ	351,373	351,373
Ոչ ընթացիկ կանխավճարներ	11,501,718	10,599,534
Տրված փոխառություններ	-	12,098,500
Ժամկետային ավանդներ	496,368	5,807,280
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	43,818,710	59,710,561
Պաշարներ	743,004	1,344,336
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	224,185	172,821
Ընթացիկ կանխավճարներ	105,081	36,224
Հաշվանցման ենթակա ԱԱՀ	1,297	14,002
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	50,652
Տրված փոխառություններ	12,206,217	103,683
Ժամկետային ավանդներ	7,785,999	996,074
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	671,781	761,287
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	21,737,564	3,479,079
Ընդամենը ակտիվներ	65,556,274	63,189,640
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	690,930	690,930
Իրական արժեքի պահուստ վաճառքի համար մատչելի ներդրումների համար	9,421,469	9,421,469
Զբաղիչված շահույթ	52,084,214	49,998,906
Ընդամենը սեփական կապիտալ	62,196,613	60,111,305
Պարտավորություններ		
Հետաձգված հարկային պարտավորություն	2,776,110	2,759,415
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	2,776,110	2,759,415
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	121,205	160,593
Պայմանականորեն գնանշված վաճառքների գծով ստացված կանխավճարներ	-	11
Կրեդիտորական պարտքեր հարկերի գծով	74,595	125,866
Հաշվեգրված շահութահարկ	357,945	-
Պահուստ	27,399	-
Այլ դրույթներ	2,407	-
Հետաձգված եկամուտ	-	32,450
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	583,551	318,920
Ընդամենը պարտավորություններ	3,359,661	3,078,335
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	65,556,274	63,189,640

*«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն
2017 թ. չորրորդ եռամսյակի համար*

	01/10/2017- 31/12/2017	01/01/2017- 31/12/2017	01/10/2016- 31/12/2016	01/01/2016- 31/12/2016
Հազար դրամ	Ծնթգ.			
Հասույթ	1,597,807	7,059,042	5,341,661	6,566,170
Վաճառքի ինքնարժեք	(1,198,092)	(4,959,132)	(3,523,894)	(4,420,373)
Համախառն շահույթ	399,715	2,099,910	1,817,767	2,145,797
Վարչական ծախսեր	(219,384)	(755,400)	(628,808)	(875,151)
Գործառնական այլ ծախսեր	(40,165)	(274,726)	(97,700)	(316,159)
Գործառնական այլ եկամուտներ	9,860	40,323	28,311	39,411
Գործառնական գործունեության արդյունքներ	150,026	1,110,107	1,119,570	993,898
Ֆինանսական եկամուտ	406,640	1,541,692	1,060,520	1,428,648
Ֆինանսական ծախս				
Արտարժույթի վերագնահատումից զուտ ծախս	(311,165)	23,194	(116,949)	10,983
Ասոցիացված կազմ. վնասի բաժնեմաս	-	-	-	(4,367)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	245,501	2,674,993	2,063,141	2,429,162
Շահութահարկի գծով ծախս	(134,154)	(589,685)	(475,121)	(558,754)
Շահույթ ժամանակաշրջանի համար	111,347	2,085,308	1,588,020	1,870,408
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	10,141,469
Ընդամենը համապարփակ եկամուտ	111,347	2,085,308	1,588,020	12,011,877

Գլխավոր հաշվապահ Ա.Հակոբյան

Գլխավոր տնօրեն Կ.Հակոբյան

	2017թ	2016թ.
Գործառնական գործունեություն		
Պատվիրատուներից ստացված գումարներ, ներառյալ ԱԱՀ-ն	8,260,798	7,777,603
Վճարումներ մատակարարներին, ներառյալ ԱԱՀ-ն	(3,415,250)	(3,707,125)
Վճարումներ աշխատակիցներին	(1,424,615)	(2,077,740)
Վճարումներ շահութահարկի գծով	(143,350)	-
Վճարումներ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	(1,652,008)	(908,946)
Տրված նվիրատվություններ	(130,218)	(115,953)
Մատակարարներից կանխավճարի վերադարձ	-	150,129
Այլ ստացված գումարներ	16,058	1,710
Այլ վճարումներ	(12,244)	(52,549)
Ստացված տոկոսներ	855,965	860,057
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված / (օգտագործված) գործառնական գործունեությունում	<u>2,355,136</u>	<u>1,927,186</u>
Ներդրումային գործունեություն		
Ներդրում ժամկետային ավանդներում	(2,512,080)	(4,560,935)
Ժամկետային ավանդների մարում	1,069,360	3,108,145
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,018,084)	(662,904)
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	13,080	4,760
Տրված փոխառությունների մարում	-	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված) / ստացված ներդրումային գործունեությունից	<u>(2,447,724)</u>	<u>(2,110,934)</u>
Ֆինանսավորման գործունեություն		
Վարկերի և փոխառությունների մարում	-	-
Վճարված շահաբաժիններ	-	-
Վճարված տոկոսներ	-	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ֆինանսավորման գործունեությունում	<u>-</u>	<u>-</u>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(92,589)	(183,749)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ	761,287	946,066
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	3,083	(1,030)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>671,781</u>	<u>761,287</u>

*Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ
Սեփական կապիտալի փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն
2017թ դեկտեմբեր 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար*

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Իրական արժեքի պահուստ վաճառքի համար մատչելի ներդրումների համար	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	690,930	49,998,906	9,421,469	60,111,305
Շահույթ 2017թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	2,085,308	-	2,085,308
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք 2017թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	2,085,308	-	2,085,308
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	690,930	52,084,214	9,421,469	62,196,613

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Իրական արժեքի պահուստ վաճառքի համար մատչելի ներդրումների համար	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	690,930	48,128,498	(720,000)	48,099,428
Շահույթ 2016թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	1,870,408	10,141,469	12,011,877
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք 2016թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար	-	1,870,408	10,141,469	12,011,877
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ին դրությամբ	690,930	49,998,906	9,421,469	60,111,305

1. Ներածություն

(ա) Հայաստանի գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչն, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Հիմնական գործունեությունը

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ն (Ընկերություն) 1968թ-ին հիմնադրված «Մաքուր երկաթի փորձարդյունաբերական գործարանի» իրավահաջորդն է: 1995թ-ին Ընկերությունը վերակազմավորվել է «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի:

Ընկերության հիմնական գործունեությունը ֆերոմոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի արտադրությունն է, որոնք վաճառվում են արտերկրում: 2015թ-ից Ընկերությունը սկսել է մատուցել մոլիբդենի խտանյութի վերամշակման ծառայություններ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արցախի պող. 75:

Ընկերությունն իր գործարքների մեծամասնությունն իրականացնում է կապակցված կողմերի հետ: Արդյունքում, Ընկերությունը տնտեսապես կախված է կապակցված կողմերից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում կատարվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատումների հետ կապված անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների էական ճշգրտման ռիսկ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություններ 15-ում և 24-ի (ա) կետում:

Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս՝ Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնհատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի չափման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություններ 15-ում և 24-ի (ա) կետում:

5. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների և ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

6. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Ասոցիացված կազմակերպություն

Ասոցիացված կազմակերպություններ են հանդիսանում այն կազմակերպությունները, որոնց ֆինանսական և գործառնական քաղաքականության նկատմամբ Ընկերությունն ունի նշանակալի ազդեցություն, սակայն՝ ոչ վերահսկողություն: Ընկերության կողմից նշանակալի ազդեցություն ենթադրվում է այն դեպքում, երբ Ընկերությանն են պատկանում այլ կազմակերպության քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի 20%-ից 50%-ը:

Ասոցիացված կազմակերպություններում ունեցած բաժնեմասերը հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով, և վերջիններիս սկզբնական ձանաչումն իրականացվում է սկզբնական արժեքով: Ներդրման սկզբնական արժեքը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառում են բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների շահույթում կամ վնասում և այլ ֆինանսական արդյունքներում Ընկերության բաժնեմասն այն ճշգրտումներից հետո, որոնք իրականացվում են ներդրման օբյեկտների հաշվապահական հաշվառման քաղաքականությունն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ համապատասխանեցնելու համար՝ այն ամսաթվից, երբ Ընկերությունը սկսում է նշանակալի ազդեցություն ունենալ մինչև այն ամսաթիվը, երբ դադարում է նշանակալի ազդեցություն ունենալ: Ներդրման հաշվեկշռային արժեքի գծով կատարվում են ճշգրտումներ՝ ձեռքբերման ամսաթվից ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Ընկերության բաժնեմասի փոփոխությունները ձանաչելու համար: Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների հետ իրականացվող գործարքներից առաջացող չիրացված օգուտը բացառվում է ներդրման դիմաց ներդրման օբյեկտում Ընկերության բաժնեմասի չափով: Չիրացված վնասը բացառվում է նույն եղանակով ինչպես չիրացված օգուտը, սակայն այնքանով, որքանով բացակայում է արժեզրկման վկայություն:

Բաժնեմասնակցության մեթոդը կիրառելուց հետո, Ընկերությունը որոշում է, թե արդյոք անհրաժեշտ է ձանաչել արժեզրկումից կորուստ ասոցիացված կազմակերպությունում կատարած ներդրման գծով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք առկա է ասոցիացված կազմակերպությունում կատարած ներդրման արժեզրկման անկողմնակալ վկայություն: Նման վկայության դեպքում, Ընկերությունը հաշվարկում է արժեզրկման գումարը՝ որպես փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերություն:

(բ) Հասույթ

Վաճառված ապրանքներ

Հասույթը ձանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր

է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսումներն ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Բնականոն գործունեության ընթացքում ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների:

Սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցման ժամկետը կախված է առանձին վաճառքի պայմանագրերի պայմաններից: Ֆերոնոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի համար փոխանցումը սովորաբար տեղի է ունենում, երբ արտադրանքը մաքսագերծվում է մաքսատանը՝ արտահանման նպատակով:

Ընկերության ֆերոնոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի սփոթ գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, ֆերոնոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ առաքման ամսից հետո:

Ընկերության պայմանականորեն գնանշվող վաճառքի պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակներով: Պարունակվող ֆինանսական գործիքը, որն իրենից ներկայացնում է վերջնահաշվարկի գինը ճշգրտված ապագա գնով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես դեբիտորական պարտք կամ ստացված կանխավճար և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) հասույթի միջոցով:

Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանին համամասնորեն: Գործարքի ավարտվածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա:

(գ) Ֆինանսական եկամուտ և ծախս

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- ներդրված միջոցների և տրամադրված փոխառությունների գծով տոկոսային եկամուտը,
- շահաբաժինների գծով եկամուտը,
- փոխառության ծախսումների գծով տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը կամ վնասը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահաբաժինների գծով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ամսաթվին, երբ հաստատվում է վճարում ստանալու Ընկերության իրավունքը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի շարժը՝ զուտ շահույթի կամ զուտ վնասի:

(դ) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույթով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ե) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղջման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(զ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական է, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալվում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

(է) Պաշարներ և վաճառքի ինքնարժեք

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը՝ մուտք, առաջինը՝ ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ծեռք բերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Ընկերության մոլիբդենի խտանյութի գնման պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի սփոթ գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի միջին շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, մոլիբդենի խտանյութի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ առաքման ամսից հետո:

Ընկերության պայմանականորեն գնանշվող գնման պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակներով: Պարունակվող ֆինանսական գործիքը, որն իրենից ներկայացնում է վերջնահաշվարկի գինը ճշգրտված ապագա գնով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես կրեդիտորական պարտք կամ վճարված կանխավճար և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) վաճառքի ինքնարժեքի միջոցով:

(ը) Լյլ ծախսեր

Սոցիալական ծրագրերի գծով ծախսումներ

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Ընկերության հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Ընկերության աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(թ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- շենքեր 12-ից 40 տարի
- մեքենա-սարքավորումներ 5-ից 20 տարի
- փոխադրամիջոցներ 2-ից 9 տարի
- տնտեսական գույք 1-ից 5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(Ժ) Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները փոխառությունների և դեբիտորական պարտքերի ու վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերին:

Ընկերությունը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն այլ ֆինանսական պարտավորությունների դասին:

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ - ճանաչում և ապաճանաչում

Ընկերությունը փոխառությունները և դեբիտորական պարտքերի սկզբնապես ճանաչումն իրականացնում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Ընկերության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Ընկերությունն ունի հաշվանցում կատարելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Ընկերության ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, վերջիններիս լուծարման կամ սնանկացման դեպքում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է

ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասը ներառում է տրված փոխառությունները, առևտրական դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները և դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ միջոցները և ընթացիկ բանկային հաշիվները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այն ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն ֆինանսական գործիքների այլ դասին: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, որի փոփոխությունները, բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ներկայացվում են սեփական կապիտալում՝ իրական արժեքի պահուստում: Երբ ներդրումն ապաճանաչվում կամ արժեզրկվում է, սեփական կապիտալում կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի: Զգնանշվող բաժնային գործիքները, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հաշվառվում են սկզբնական արժեքով:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ - չափում

Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառություններն ու առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(iii) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ընկերությունն ունի պարունակվող ածանցյալ ֆինանսական գործիքներ, որոնք վերաբերում են մոլիբդենի խտանյութի առքի և ֆերոմոլիբդենի ու եռակաված մետաղական մոլիբդենի վաճառքի գործարքներին:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն պես: Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, և դրա փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Պարունակվող ածանցյալ գործիքներն առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե պարունակվող ածանցյալ գործիքի ու հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն, առանձին գործիքը, որի պայմանները նման են պարունակվող ածանցյալ գործիքի պայմաններին, բավարարում է ածանցյալ գործիքի սահմանմանը, և համակցված գործիքը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Առանձնացվող

պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

(հ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

(I) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների (ներառյալ բաժնային արժեթղթերի) արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել՝

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից,
- Ընկերությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները,
- փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները,
- տնտեսական պայմանները, որոնք կապված են պարտականությունների չկատարման հետ,
- ակտիվ շուկայի վերացումն արժեթղթի համար կամ
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում են ֆինանսական ակտիվների խմբից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազեցման մասին:

Բացի այդ, բաժնային արժեթղթերում կատարած ներդրումների համար արժեզրկման անկողմնակալ վկայություն է համարվում իրական արժեքի էական կամ երկարաձգված նվազումը սկզբնական արժեքից:

Անորոշագույն արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն այս ակտիվների արժեզրկման վկայությունը դիտարկում է թե՛ առանձին և թե՛ հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվների արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս՝ Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և պարտքային պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա պատմական տվյալներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորուստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում և արտացոլվում է պահուստային հաշվում: Եթե Ընկերությունը գտնում է, որ չկա ակտիվը վերականգնելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Ընկերությունը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները գեղջի ծախսագրման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորուստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են սեփական կապիտալում իրական արժեքի պահուստի ծով կուտակված վնասը վերադասակարգելով շահույթի կամ վնասի: Կուտակված վնասը, որը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմանը վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ: Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ներառում են չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ վերջիններիս իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Եթե գոյություն ունի նման ներդրումների արժեզրկման անկողմնական վկայություն, արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով գեղջված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Նման ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտներ

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտի գծով արժեզրկումից կորուստը չափվում է համեմատելով ներդրման փոխհատուցվող գումարը վերջինիս հաշվեկշռային արժեքի հետ: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել նպաստավոր փոփոխություն փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատականներում:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝

որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները տեղաբաշխվում են՝ դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով նվազեցնելու համար:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և անորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(խ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ջեդջի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(ծ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Ընկերությունը ներկայացնում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթի մասին տեղեկատվություն իր սովորական բաժնետոմսերի համար: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Ընկերության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտումով: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը հաշվարկելու նպատակով Ընկերությունը ճշգրտում է իր սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը և շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի կշռված միջին թիվը՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտումով՝ բոլոր նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի ազդեցությունը հաշվի առնելու համար:

(կ) Սեզմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Ընկերության այն բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր, ներառյալ Ընկերության այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող հասույթները և ծախսերը: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Խորհրդի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով:

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից:

7 Հիմնական միջոցներ

2017թ. ի ընթացքում ընկերությունը ձեռք է բերել 1,187,229 և օտարել է 38,247 հազար դրամի հիմնական միջոցներ: 2016թ. ձեռք է բերել 827,159 և օտարել է 39,901 հազար դրամ:

8 Կապակցված կողմեր

(ա) Վերահսկողություն

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է հանդիսանում Cronimet Ferroleg GmbH-ը: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է Cronimet Holding GmbH-ը, որը վերահսկվում է Պիլարսկի ընտանիքի կողմից:

(բ) Գործարքներ առնացքային ղեկավար անձնակազմի հետ

2017թ. ընթացքում առնացքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

հազ. դրամ	01.01.17թ. - 31.12.17թ.	01.01.16թ. - 31.12.16թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	171,120	175,551

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի գումարը		Մնացորդը առ	
	01.01.17թ. - 31.12.17թ.	01.01.16թ. - 31.12.16թ.	31.12.2017թ	31.12.2016թ.
Արտադրանքի և ծառայությունների վաճառք				
Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	6,205,829	6,566,170	63,274	
Նյութերի և ծառայությունների ձեռքբերում				
Վերջնական մայր կազմակերպություն	7,296	3,175	-	-
Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ (նյութեր)	-	-	11,203,104	10,535,663

Նյութերի ձեռքբերման գործարքների մնացորդները վերաբերում են մոլիբդենի խտանյութի գնման համար տրված կանխավճարներին: Մատակարարման պայմանագրի համաձայն՝ խտանյութը պետք է մատակարարվի 2020թ-ից 2021թ. ընկած ժամանակաշրջանում: Տոկոսները գանձվում են մնացորդի գծով նախքան մատակարարումը՝ մեկ ամսվա Libor գումարած 4.95% տոկոսադրույքով: 2017թ-ի ընթացքում մնացորդի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 660,240 հազար դրամ, 2016թ-ի ընթացքում մնացորդի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 560,394 հազար դրամ:

հազ. դրամ	Տոկոսային եկամուտ		Մնացորդը առ	
	01.01.17թ. - 31.12.17թ.	01.01.16թ. - 31.12.16թ.	31.12.17թ.	31.12. 2016թ.
Տրված փոխառություններ				
Վերջնական մայր կազմակերպություն	413,360	421,091	12,206,217	11,963,161

Կապակցված կողմին տրված փոխառության նկատմամբ կիրառվում է տարեկան 3.4% տոկոսադրույք, և փոխառությունը ենթակա է մարման 2018թ. մայիսին: